

ՌՈՒԲԷՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

ՊԱՏՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԻՑ

II

Ժընևե 1890 թ. — Առաջին տպաւորութիւններ. — «Գիտական» բանի հմայքը. — «Հնչակ»-ի ծնունդը եւ Հայ յեղափոխութեան պահանջը. — Ընկերային հարցի յանկարծակի հրահրումը Եւրոպայում եւ հայ ուսանողական միջավայրը. — Նազարբէկի գեկոյցը ընկերվարութեան մասին :

«Մարդկային կեանքը մշտապէս պատրանք է լոկ» :

Pascal, « *Les Pensées* »

Հասնելով Ժընևե, 1890 թ. օգոստոսի սկիզբներին, ես հաստատուեցի Ղեկեղերիական մի համեստ ընտանիքում, որի մօտ ազգականներէց էր Ժընևեի համալսարանի ուսուցչապետ հռչակաւոր գիտնական Քառլ Ֆոխթը : Վերջինս մեծ չափով օգնեց ինձ համալսարանի լաբորատորիաւում ունենալու մշտական սեղան ընդդիմական, մարդաբանական եւ, մանաւանդ, քիմիական աշխատանքների համար : Այսօր ես չեմ կարող երախտագիտութեամբ չիշել Ք. Ֆոխթի անունը, որ իր դասախօսութիւններով, խորհուրդներով ու, մանաւանդ, ընտանեկան յարկի տակ արած զրոյցներով ու պատմութիւններով մի քանի ամուսնայ ընթացքում բոլորովին յեղաշրջեց իմ աշխարհահայեացքը տիեզերքի բնական ուժերի եւ, ի հարկէ, իմ ունեցած գաղափարների գերբնական զօրութեան ու հոգու անմահութեան մասին :

Ծերունի Ֆոխթը, երբեմն գերմանական յեղափոխական, մի ժամանակ տաք բանակուիւ էր ունեցել Ք. Մարքսի հետ, յետոյ, իբրեւ տարազիր եկել հաստատուել էր Ժընևեում եւ ամբողջովին նւիրել գիտութեան : Նա մարմնացումն էր 19-րդ դարի բանապաշտ գիտնականի տիպարի, որի բմբոսնումներով ամէն ինչ օրինապատշաճ էր բնութեան մէջ : Գոյութիւն ունէր միայն նիւթը ու սրա ուժը, որ եւ կադմում է մարդկային փիլիսոփայութեան հիմքը, սկիզբն ու վախճանը. իսկ ինչ որ ոգեկան է, զգացմունքի կամ հոգու հետ զործ ունի՝

«միայն միտքիքների ծամծամումն է»։ Նա ընդունում էր Դարվինի հռչակաւոր տեսութիւնները, ինքն էլ այդ մարդում որոշ գիւտեր էր արել, աստուածացնում էր գիտական փորձերն ու եղբակացութիւնները, անվերապահօրէն ընդունում էր բոլոր գիտական նոր գիւտերը ու մեղ էլ, իր աչակերտներին, մասնակից անելով «գիտական» մտայնութեան՝ ողեւորում եւ մեր երիտասարդական հայկացիներին պատւաստում էր զուտ նիւթապաշտական (գիտական մոքով) աշխարհահայեացք։ Երիտասարդութեան յատուկ հաւատով մենք իւրացնում էինք այն ժամանակւայ գիտական տեսալները իրրեւ անհերքելի ճշմարտութիւններ, իրրեւ անկասկածելի եւ գիտութեան վերջին խօսք․ մարդկային գոյութեան էութիւնն ու դադանիքը «գրտնւած էր» մեղ համար, ամէն բան բնութեան մէջ պարզ էր․ «գտնւած» էին տիեզերքի բնականոն օրէնքները եւ մնում էր միայն այդ ուղիով ընթանալ...

Եւ, սակայն, հաղիւ կոխած քսաներորդ դարի չէմքը՝ գիտութիւնը մի անսպասելի ոստումով այնպիսի քայլեր արաւ, որ մեր որդեգրած բնագիտական տեսութիւնները, նորանոր փորձերի ենթարկելով, հետագայում, մեղ ցոյց տւին, որ մեր ընդունած «գիտութեան վերջին խօսքից» շատ քիչ բան է մնում — գիտական պատրանքների մի շարան միայն... Բաւական է թէկուզ յիշել հիւլէների նոր լմբոնումները, կամ ելեկտրականութեան յեղաշրջիչ հիմքերը, բնագիտութեան եւ բնախօսութեան անակնկալ գիւտերը, տիեզերքի ու տարածութեան նոր բացատրութիւններն ու ժամանակի «յարարեական տեսութիւնները»...։ Յեղաշրջումը բնական կամ դրական գիտութիւնների մէջ այնքա՛ն մեծ էր, որ հետագայում ստեղծւեցին փիլիսոփայական բոլորովին նոր լմբոնումներ մարդու, տիեզերքի ու բնութեան մասին...։ Բայց չչեղւենք նիւթից եւ անցնենք հերթով Ժընեւի իմ առաջին ապրումներին։

Ժընեւում ես գտայ ինձ համար բոլորովին նոր եւ իւրայատուկ հայ ուսանողական միջավայր։ Ռուսահայ ուսանողութիւնը, որ եկել էր եւրոպական համալսարաններում ուսանելու համար (Փարիզ, Մոնպէլիէ, Միւնխէն, Բերլին եւ, մասնաւանդ Ժընեւ), սպունդի պէս ծծում եւ իւրացնում էր այն ամենը, որ կապւած էր քաղաքական աղատութիւնների հետ, մասնաւանդ երբ հարցը վերաբերում էր Թիւրքիայի, Ռուսաստանի եւ մասնաւորապէս Հայաստանի վիճակին։ Բայց հայ ուսանողութիւնը սկսել էր հետաքրքրւել ու որդեգրել նաեւ այն ընկերային ու ընկերվարական դադափարներն ու հեռանկարնե-

ըը, որոնք այն ժամանակները մեծ ծաւալ եւ ուժգնութիւն էին սկսում ստանալ ու դրեւել Եւրոպայի քաղաքական հարցերին զուգընթաց :

Եւրոպայի ուսնահայ ուսանողութեան ստեղծած իւրայատուկ միջնորդութեան հասկանալու համար պէտք է ի նկատի ունենալ հետեւեալը : Արդէն ութսունական թւականների կէսերից սկսած, Արծրունու ազատամտական զաղափարները լիովին էին զոհացնում ուսնահայ մտաւորականութեան նոր հասնող շերտերին, եւ սրանք չը դռնէիմ հայկական հրատարակադրութեան ու հայ հանրային կեանքում քաղաքական մտորումների ձայնակից շնչներ՝ իրենց հայեացքը ուղղել էին շրջապատի ուսն արմատական մտաւորականութեան որոնումների վրա : Այդ համակրութիւնը դէպի ուսն արմատական խաւերն, ըստ ինքեան, բնական էր, շնորհիւ ուսն կառավարութեան ստեղծած յետադէմ քաղաքականութեան : Եթէ ուսն արմատական մտաւորականութեան հոգեկան շարժումները պահանջ էին զգում աւելի թարմ, աւելի ազատ ու առողջ քաղաքական միջնորդարի, եւս տեսնել հայ հասնող երիտասարդութիւնը պէտք է իրեն զգար քաղաքական կապանքների մէջ. ուսն կառավարութիւնը մեծ ուժով եւ մեծ չափով սկսել էր նեղ ազդայնական եւ հակահայկական քաղաքականութիւն, եւ ուրեմն, գիտակից հայ երիտասարդութիւնը թէ՛ իրբեւ ուսն քաղաքացի եւ թէ՛ որպէս հայ համայնքի անդամ՝ տեսնում էր իրեն կապկապած եւ խրամ յետադէմ քաղաքականութեան ցանցերում :

Կովկասում, ինչպէս եւ Ռուսաստանի մայրաքաղաքների համալսարանական ուսանողական շրջաններում, երեւան էին եկել հայ երիտասարդներ, որոնք արդէն որդեգրել էին ուսն յեղափոխականների՝ «նարոդովոյցի» կոչւած ընկերավարականների զաղափարները : Հետագայում, երբ ստեղծւեցին հայ յեղափոխական կուսակցութիւնները, մենք պատահում ենք թէ՛ Հնչակի եւ թէ՛ Դրօշակի հիմնադիրների շարքերում կարկառուն դէմքերի, որոնք երբեմն ընդունած էին «նարոդովոյցի» յեղափոխականների ըմբռնումները : Այսպէս հայ յեղափոխականների մը մասը ընդ միշտ մնաց յարած նարոդովոյցիների քաղաքական եւ ընկերային տեսութիւններին ու աշխարհահայեացքներին, միւս մասը 1889 թւականից արդէն որդեգրած էր միջադրային «Սոցիալ – Դեմոկրատ» ընկերավարական կուսակցութեան զաղափարները : Եթէ այստեղ միջանկեալ այդ մասին յիշեցի, պատճառը այն է, որ յեղափոխական ընկերավարութեան երկու տարբեր ըմբռնումները, ասեմ եւ աշխարհահայեացքները, դարձան մի տեսակ քար գայթակղութեան եւ հիմնակէտ երկու հայ յեղափոխական կուսակցութիւնների փոխադարձ բանակոխների, անմիարան դործունէութեան

և թշնամական վերաբերմունքի: Ես դեռ առիթ կուեննամ այդ հարցին անդրադառնալու այն չափով որ չափով որ անձամբ ներկայ եմ եղել այդ բանակիւններին, «միութեան» առթիւ կատարած նամակադրութեան և Կովկասից եկած բանակցողի (Յ. Լորիս - Մելիքեանցի) առաջարկութիւններին ու խօսակցութիւններին: Այստեղ անմիջապէս պէտք է ասեմ, որ իմ մօտ, եթէ չասեմ մտերիմ, կապերը ժընեռում հաստատուած Հնչակեան Կենտրոնի և Նաղարբէկեան ամուսինների հետ շարունակեցին մինչեւ 1894 թ. վերջերը, որից յետոյ պաշտօնական նամակով յայտնեցի նրանց, որ չնորհիւ այն բանի, որ իմ և նրանց միջեւ եղած սկզբունքային տարաձայնութիւնները (յեղափոխական դործունէութեան և կազմակերպչական հարցերի վերաբերմամբ) դնալով շատ սուր կերպարանք են ստանում, և ստիպւած եմ դուրս գալ Հնչակից՝ խղելով իմ յարաբերութիւնները Հնչակի Կենտրոնի հետ: Անշուշտ՝ աւելի մանրամասնօրէն և իր հերթին դեռ կը խօսեմ այդ մասին:

*
**

Զւիցերիայի ժընեւ քաղաքը դեռ անցեալ դարու սկզբներից մի տեսակ աւանդական բնակավայր էր եղած ամէն տեսակ քաղաքական - յեղափոխական տարադիրների համար: Երկրի քաղաքական ազատութիւնները համեմատած եւրոպական բոլոր միւս երկրների հետ՝ այնքան լայն էին և հաստատուն, տեղացի ազգաբնակիւթիւնը այնքան համբերատար ու միշտ համակիր էր օտարազգի քաղաքական տարադիրների վերաբերմամբ, որ աւանդաբար այդ քաղաքում աղբւրէլ ու դործեւ են ե'ւ Ֆրանսացի, ե'ւ իտալացի, ե'ւ գերման, ե'ւ լեհ, ե'ւ ուրեւ յեղափոխականներ: Ինքը բնութիւնը, Լէման լճի ղեղեցկութիւնը, չրջապատի Ալպեան լեռները, Աստ և Ռոն գետերի տարբեր գոյներն ու տարբեր վաղքը, որոնք որոշ կէտում միանում, խառնում ու հեռանում են, ամէն ինչ, ասում եմ, ծնում էր վիպական մթնոլորտ և իր կնիքն էր դնում տարադիրների ընկերային - քաղաքական հեռանկարների ու ծրագիրների վրա: Նման մի միջավայր, բնականաբար, իր կնիքը պիտի դնէր և այն հայ յեղափոխական կուսակցութիւնների վրա, լինին ծնւած ժընեւի ղեղածիծաղ ափերի վրա, եթէ այլուր, որոնք պիտի որդեգրէին հայ յեղափոխական դործը:

Մի քանի օր է, որ ես եկած էի ժընեւ, երբ վճուցել դրել Mr. Beniard, Poste restante — «Հնչակ» թերթի գաղտնի հասցէին՝ խնդրելով, որ հաճին տալ ինձ ժամագրութիւն խմբագրութեան հետ: Անցել էր երկու - երեք օր, երբ մի երեկոյ դալիս են ինձ մօտ հաղիւ

սուեքած բեխերով երկու երիտասարդներ, արտաքուստ շատ նման իրար, եւ տեղեկանում են՝ ե՞ս եմ արդեօք «Ռ. Բերբերեան ստորադրւած նամակի հեղինակը: Ֆրանսերէնից հայերէնի անցնելով՝ ես խնդրում եմ երկու երիտասարդներին բացատրել, թէ իրա՞նք ուղքե՛ր են: — Ես Աղեքսանդր Աթաբէկեանն եմ, եկել եմ «Հնչակ»-ի խմբագրի կողմից ձեզ հրաւիրելու, եթէ կարելի է հէնց այժմ, դնալ մեզ հետ միասին, նրա հետ հանդիպում ունենալու համար:

Տալով իմ համաձայնութիւնը՝ ես ինչ որ հարցով դիմում եմ միւս երիտասարդին, հաւատացած, որ նա էլ հայ է: Բայց Ա. Աթաբէկեանը ընդմիջում է՝ ներկայացնելով իր ուղեկցին. «Հա՛, ծանօթացէ՛ք (ուսներէնի փոխելով խօսակցութիւնը), սա իմ ընկերն է եւ բոլոր հայերին ծանօթ բուլղար ուսանող, ինձ պէս բժշկական բաժնի՝ Բուխարսկա Ռաիովսկի » ... :

Շուտով ճանապարհ ենք ընկնում Պ. Beniard-ին տեսնելու, որի քնակարանը ժընեւի միւս ծայրումն էր գտնուում: Ճանապարհին՝ բուլղար ուսանողը կոտրատած ուսներէնով (հետագայում լաւ էր խօսում, երբ ամուսնացաւ մի ուսուսանողուհու հետ) պատմեց ինձ, որ իր ամենամտերիմ բարեկամները ժընեւում հայ ուսանողներն են: Հետագայ ամիսներում արդէն այնքան մտերմացած էի այդ համակրելի ուսանողի հետ, որ «դու» էինք ասում իրար. նա երազում էր «սուեղծել» Բուլղարիայում «Բուլղար Սոցիալ - Դեմոկրատ ընկերվարական կուսակցութիւն», եւ, պէտք է ասած, այդ երազը մեծ չափով իրագործեց: Ես դեռ առիթ կուենեմ նրա մասին խօսելու երկարօրէն:

«Հնչակ»-ի խմբագիրը ապրում էր վեցերորդ յարկում, եւ նախ քան վեց յարկ բարձրանալը՝ Ա. Աթաբէկեանը կանգնեց փողոցի միջին եւ վեցերորդ յարկի պատուհաններին նայելով՝ սկսեց սուել այնպէս, ինչպէս առհասարակ գեիցերիացիք սուելում են նշան տալու համար: Շուտով վեց յարկանի տան բազմաթիւ պատուհանները բացւեցին եւ ամէն յարկից գլուխներ երեւացին ու թագնեցին: Վերջապէս բացւեց եւ վեցերորդ յարկի պատուհանը, երեւաց դանդուր մադերով ու մօրուքով մի գլուխ եւ հայերէն պատասխանեց՝ «կարելի է»: *)

*) Սուլոցի առիւ երկու խօսք. երբ մի շարք յետոյ ես մեծակ այցելեցի Նագարբէկին, ըստ սովորութեան, փողոցի մէջտեղը կանգնած՝ սուլեցի, որ իմանա՞մ՝ տա՞մն է արդեօք. սակայն, մոռացել էի գիցեթիացիների սուլելու եղանակը եւ զանազան հնչիւններ փորձելուց յետոյ, չգիտեմ ինչպէս եւ ինչու՝ սուլեցի

Բարձրանում ենք: Աթարէկը տալիս է դանդի երեք հարւած: Մտնում ենք մի մեծ սենեակ, մէջտեղը կըսր սեղան, լուսաւորւած վերից կախած ելեկտրական լամպով. սենեակի անկիւնում մի ուրիշ դրասեղան, որի վրա կարմրագոյն ելեկտրական աղօտ լուսաւորութիւն: Սեղանին մօտ նստած էր դանդուր մաղերով մարդը՝ թխադէմ, սեւ մեծ մօրուքով, կարճատես աչքերին Փրանսական ձեւի ակնոցներով: Վեր է կենում, ձգում է չյանդած ծխախոտը միւս բազմաթիւ կէս ծխած գլանակների մէջ, երկարացնում է ձեռքը ու աւելացնում՝ «Աւետիս Նաղարբէկ»: Յետոյ՝ «Ծանօթացէք, կիսս է՝ Մարիամ Նաղարբէկ»: Կիսը միջամտում է եւ գիմելով ինձ՝ աւելացնում է՝ «կարող էք ինձ ասել «տիկին Մարօ» եւ առանց պաշտօնական աղջանուհներին. յուսով եմ, որ այնքան կը մտերմանանք, որ առանց «պարոն» կամ «տիկին» դարձաւ բառերի էլ ընկերական յարաբերութիւններ կը ստեղծեն... ա՛յ, սա մեր ընկերներին (հարեւան սենեակից ներս մտնողների մասին), ծանօթացէք. սա մեր Լեւոնն է (Բարսեղ Զաքարեան), սա մեր Յովնանն է (Յովնան Դաւթեան), սա մեր Սաշան է (Ալեքսանդր Աթարէկեան), սա մեր Խոխաթիան է (Քոխաթիա Ռակոյսկի) որոնց հետ արդէն ծանօթ էք»: Ու յետոյ, գիմելով նրանց, աւելացնում է. «Պ. Ռուբէնը «Հնչակ»-ի վաղուցայ ընթերցողն է ու (ինձ գիմելով) յուսով եմ եւ համակրողը. մենք հաւատացած էինք, որ «Սուլթան - Շահ» անունը իր կեղծանունն է. բանից դուրս է գալիս, որ դա իր մեծ մօր աղջանուհն է, որի հասցէով «Հնչակ» էր ստանում»:

Սկզբում ես շատ զարմացայ որ տիկին Մարօն առաջին քայլից եւ ինձ համար անծանօթ մարդկանց ներկայութեամբ՝ մի ահնթարթում իմ մասին գիտցած ու չգիտցածը դուրս արաւ բերնից, բայց չուտով իմացայ, որ բոլոր ներկայ եղողները Նաղարբէկեանների

«Մեր Հայրենիք» երգի առաջին տողի եղանակը ու փանիցս կրկնեցի. այդ ժամանակ՝ միայն վեցերորդ յարկի պատուհանը բացեց եւ լսեց՝ «կարիւի է»: Նաղարբէկին բացատրեցի, որ մոռացել էի ընդունւած եղանակը, ուստի փորձեցի հայկական երգով նշան տալ: Նաղարբէկը շատ հաւանեց եւ առաջարկեց իր ծանօթ հայ բարեկամներին՝ սուլի «Մեր Հայրենիք»-ի առաջին տողը, իբրեւ նշան միայն հայերի համար: Հետագայում՝ Յոնան Դաւթեանը վերադառնալով Կովկաս եւ Պարսկաստան՝ մտքով էր այդ սուլոցը, որպէս նշան իր ծանօթների շրջանում: Երբ «Կրօնակ»-ը հաստատեց ժընետում, 1893 թ., անխորթին սկսաւ գործածել «Մեր Հայրենիք»-ը՝ իբրեւ նշան իրար գտնելու՝ լինի գիշերայ մքուրեան մէջ, լինի իմանալու համար քէ տա՞նն է այս կամ այն ընկերը եւ այլն: Ռ.Բ.

մտերիմ բարեկամներն են եւ «Հնչակ» թերթին շատ մօտ կանգնած մարդիկ: Շուտով նկատեցի եւ այն, որ այդ տիկ. Մարօն խիստ շատախօս կին էր, իւրաքանչեւ բացականչութիւններով, յամառ, անդիջող տրամաբանութեամբ, անհամբերատար հակառակ կարծիքի վերաբերմամբ, բայց շատուանի պէս յորդառատ, անսպառ եւ չյողնող (եւ ուրիշին յողնեցնող) խօսքի եռանդով:

Առաջին տպաւորութիւնները միշտ ուժեղ են լինում եւ լուսանկարում են յիշողութեան մէջ: Աչքիս ընկնում են սենեակի երկու պատերը, որոնց ամբացած էին սպիտակ վառարանայ պահարաններ հարկերաւոր դրքերով. դրասեղանի հանդէպ կախած էր մօրուքով ու մեծ մատերով մի պատկեր (հետագայում իմացայ, որ դա Քարլ Մարքսի լուսանկարն էր): Սենեակի միւս պատի վրա ամբացած էին շրջանակների մէջ առած բազմաթիւ լուսանկարներ, որոնց շարքին նկատեցի Բաֆֆիի, Գր. Արծրունու, Ծերենցի, Գամառ - Քաթիպայի լուսանկարները: Կար կախած եւ մի այլ պատկեր, որի վրա լուսանկարած էին Նազարբէկը կանգնած, Գր. Արծրունին եւ տիկ. Արծրունին նստած ու քիչ ցած ու նրանց ծունկերին յենած տիկ. Մարօն: Լուսանկարը, ըստ երեւոյթին, քաշած էր 1884 թւականներին արտասահմանում:

— Գր. Արծրունին ձեր մտերիմն է, հարցրի եւ Ա. Նազարբէկին:

— Եւ այո, եւ ո՛չ: Ես երբեմն Փարիզից աշխատակցում էի «Մըշակ»-ին. բայց շուտով հասկացայ, որ «ազատամիտ» կոչւած դադախներին «երգը երգւած է», ու դադարեցրի թղթակցութիւններս, մանաւանդ որ «Մըշակ»-ի խմբագրութեան մօտ կանգնած աշխատակիցները՝ Լէօն, Մալումեանը եւ ուրիշները իմ գրածները «անտեղի» էին համարում ու երեւի կողովը ձգում: Յաճախ է պատահում, որ որեւէ թերթի աշխատակիցը հեռանում է ոչ թէ խմբագրից դժգոհ, այլ այդ խմբագրին շրջապատող մտերիմներից եւ օգնականներից, բայց ես դո՛հ եմ, որ մոռացել եմ ժամանակից յետ մնացած այդ լըրագրի հասցէն. երեւի դո՛հ են եւ այն բազմաթիւ գրողները, որ երբեմն աշխատակցել են «Մըշակ»-ին՝ Ղ. Աղաջեանցը, Պալասանեանը եւ ուրիշները:

Շուտով խօսակցութիւնը դարձաւ ընդհանուր, նախ Պոլսում տեղի ունեցած ձերբակալութիւնների մասին եւ յետոյ Վիլհելմ Բ. կայսեր եւ Հոռովմի Լեւոն պապի ճառերի մասին: Լրագիրները հաղորդում էին, որ թէ՛ Վիլհելմը եւ թէ՛ պապը, մէկը իր ճառի մէջ, միւսը իր կոնդակում, խօսել են ընկերային զգացմունքների մասին, թէ մարդկութիւնը պէտք է լինի աւելի զթափաք դէպի խոնարհ խաւերը



և և մանաւանդ դէպի բանուր դասակարգը, որի տնտեսական վիճակը, չնայած օրն ի բուն աշխատանքին, մնում է միշտ խղճալի, չնորհալի աշխատանքին, որ գործարանատէրերը և հարուստները մտրդասէր և գթասիրտ չեն, թէ առաջին ընկերվարական ղգացմունքները ունեցած է Քրիստոս, և այլ աշխատեցող մտքեր: Սենեակում բոլորը միասին էին խօսում և և իրենց կարծիքը յայտնում: Աթարէկը Վիլհելմին «կեղծաւոր աւաղակ» էր անւանում, միւսները յայտնում էին աշխատեցողը, որ ընկերվարական գաղափարը «խիստ մեծ ուժ է ստացել»: Ես լուռ էի, որովհետեւ բոլորին ինձնից եւ աւելի խելացի և և ինքնաւոր, եւ աւելի կրթւած էի համարում, և ասելիք էլ չունէի, քանի որ ընկերվարութեան մասին համարեալ ոչինչ չգիտէի:

Ա. Նազարբէկը, չգիտեմ ինչու, ինձ նայելով յաղթական հաղթանքով՝ աւելացրեց. «Այո՛, հայրիկս, այժմ այլեւս առանց սոցիալիստական հարցի ոչ մի քայլ չես կարող անել. մեր ժամանակները արդէն դառնալու են սոցիալիստական և ոչ թէ «մշակական» կամ «նոր - դարական»: Եթէ պապը ու Վիլհելմը խօսում են ընկերվարական ղգացմունքների մասին, ասել է, թէ ամբողջ աշխարհ անհրաժեշտ է համարում ընկերային հարցերի լուծումը»:

Այդ ամենը ինձ համար աշխարհի նոր էր և շլացուցիչ, այլ և կարուկ ու անվիճելի իր շնչով, որ հրաժեշտի ժամանակ խնդրեցի Ա. Նազարբէկից տալ ինձ մէկ - երկու գրքոյկ կամ ձեռնարկներ այդ վարդապետութեան ծանօթանալու համար: Նազարբէկը ուրախութեամբ իր պահարանից հանեց 8 - 10 ուսերէն և Փրանսերէն գրքոյկներ, ապա և «Հնչակ»-ի ծրագիրն ու վերջին համարը, և տեց, ասելով՝ «դժբախտաբար, սոցիալիզմի մասին հայերէն լեզուով գրքեր չկան, բայց քանի որ դուք վարժ էք Փրանսերէնին և ուսերէնին՝ վերցրէք այդ գրքերը, հայ հասարակութեան մէջ արդէն պահանջ է ղգացում ծանօթանալու գիտական սոցիալիզմին, յուսով եմ, որ այդ պահանջը «Հնչակ»-ը կը լրացնէ»:

Երբ Նազարբէկ ինձ առաջնորդեց մինչև նախասենեակի դուռը, ես՝ մի պահ օգտուելով դէպքից (քանի որ մտերիմ զրոյցներին և մտքերին ներկայ էի և ուրեմն, ինձնից թաղցնելու կամ վախենալու պատճառ չկար), շունչս մէկ առած հարցրի. «Ի՞նչ գրութեան մէջ է հայ յեղափոխութիւնը»: Իմ մի քիչ միամիտ հարցին՝ սեղմելով ձեռքս Նազարբէկը պատասխանեց. «Յեղափոխութիւնը թրքահայաստանում սկսւած է. եթէ այս յաջողութեամբ ընթանայ, շուտով և բոլորական մեծ պետութիւնները ստիպւած պիտի լինեն հայկական

հարցով զբաղվելու լրջօրէն. ի հարկէ՝ ոչ թէ բարի զգացմունքներից զրդւած դէպի մեզ, այլ իրենց կոշտ ու սրտոյայիւ շահերի պատճառով... » :

Որքան էլ մեծ լինէին այն երեկոյ իմ ստացած տպաւորութիւնները, այնուամենայնիւ այդ բոլորը ոչինչ էր համեմատած այն տըպաւորութեան հետ, որ ես ունեցայ, երբ սկսեցի ծանօթանալ ընկերավարութեան դադափառներին. յաջողակումս ա՛յնքան մեծ էր, որ ես ընթերցանութեան նւիրեցի օրական 10 - 12 ժամ: Երեկոները յաճախում էի ուսանողական հաւաքոյթները, որտեղ համարեա միշտ գեկոյցի ու մտքերի փոխանակութեան առարկան ընկերավարութիւնն էր ու նրա հետ կապւած հարցերը: Այդ ժողովներում համարեա միշտ զատահում էի Բարսեղ Զաքարեանին եւ Յովնան Դաւթեանին, որոնք երկուսն էլ համալսարանի հասարակադիտական բաժնի ուսանողներ էին եւ ինձ բաղձաթիւ դրքեր էին տալիս եւ ես էլ անյաղ կարդում, վերադարձնում ու նորերն էի առնում: Տեղի էին ունենում եւ մեծ գեկոյցներ սուսերէն լեզւով, երբ ներկայ էր լինում ուսւ տարագիր եւ Սոցիալ - Դեմոկրատ կուսակցութեան հիմնադիր Գ. Պլեխանովը. այդ դէպքում վարձւում էր մեծ սրահ եւ խուռն բաղձութիւնը լրջւում էր սրահը: Հայերից ու ուսանողներից զատ դալիս էին բուլղար, սերբ, սլովաք, չեխ եւ լեհ ուսանողներ ու տարագիրներ: Ներկայ էր լինում եւ Ա. Նազարբէկը: Պլեխանովի հմայքը շատ մեծ էր. նա խօսում էր գեղեցիկ, արտայայտւում էր սլարդ եւ տրամարանօրէն. արծարծած հարցերին ոչ միայն լաւ իրադէկ էր, այլ ինքն էլ արգէն գրքած էր եւ կամ թարգմանած էնգէլսի եւ Կառլեկիի գրքերը: Պատահում էր, որ Պլեխանովը անողոր հեղնանքի էր ենթարկւում ընկերավարականների ամէն տեսակ «կեղծ» եւ «սխալ» ըմբռնումները Փրանսիական «ըլանքիստ»ների, ուսւ «նարոգովոյցի»ների, իտալեւսպանական «անիլիսանական սոցիալիզմ»-ի եւ անգլիական «սինտիքալիստ»ների ընկերավարական տեսութիւնները, ծրագիրները եւ «այլ մանր բութութեան» աշխարհահայեացքները:

Այդ հաւաքոյթներում սկզբի ժամանակները ներկայ էին լինում եւ մի քանի «նարոգովալցի»ներ, որոնք փորձում էին հակահռուսկեցիկին մէջ բերած պատմական, վիճակագրական տւեալներին ու նրա հեղնող շեշտի հարւածների տակ զգում էին ջարդւած եւ լուծւած էին: Այդ բոլորը մեզ վրա մեծ տպաւորութիւն էր թողնում: Ամենքս խնթացած, կամ տւելի ճիշտն ասած, հմայւած էինք «գիտական», «գիտականութիւն» բառերից, իսկ Պլեխանովի քարոզած ընկերավարութիւնը հո «գիտական» էր. այդ «գիտական սոցիալիզմը», հիմ-

նւած Գարլ Մարքսի տնտեսական եւ փիլիսոփայական տեսութիւնների վրա, որդեգրւած էր արդէն դերմանական բանութրական կուսակցութեան կողմից, որի ուժն ու ծաւալը օրէց օր մեծանում էր այն աստիճան, որ մինչեւ իսկ դերման կայսրը սկսել էր ի մօտոյ ծանօթանալ այդ կուսակցութեան (Սոցիալ - Դեմոկրատ) սլահանջներին եւ հետեւում էր նրա դեկավարներին ճառերին:

Ճակատադրի բերումով եւրոպական արդիւնարեւական կեանքի երեւոյթները (ընկերային ցոյցեր, բանութրական նոր կազմակերպութիւններ, խորհրդարանական ընտրութիւններին սոցիալ - դեմոկրատների յաղթութիւնները եւ այլ դէպքեր ու հանրային երեւոյթներ) համարեա ամէն օր արգարացնում էին Պլեխանովի մարդաբանութիւններն ու եզրակացութիւնները: Մեր անձնական կեանքի անփորձութիւնը, երիտասարդներին յատուկ հաւատքն ու ներքին մղումը դէպի նորը, դէպի լաւագոյնը, դէպի ամենայնապէս, որ տանում է դէպի «սոցալայ մարդկային երջանկութիւնը», մանաւանդ, երբ այդ զգացմունքները յենւած, հիմնւած ու կառւած են «դիտական տեսաբաների վրա» — չէին կարող մեզ չհամոզել, որ այո՛, «կայ միայն մի սոցիալիզմ եւ այդ սոցիալիզմը դիտական է ու հիմնւած է Մարքսի եւ էնգէլսի ու նրանց աշակերտ Պլեխանովի մէջ բերած ու քարոզած մտքերի վրա»: Աւելին. այդ ընկերվարութեան զաղափարներին զարդացումը, տարածումն ու իրադործումը հեռաւոր ապագայ դարերի հարց է, այլ ահա՛, այս մօտակայ տասնեակ տարիների... Նրա դալուստը կեանքի իրական ընթացքի հետեւանքն է ու տրամաբանութիւնը, ուստի եւ ճակատադրական. նրա գալով ամէն ինչ կը վրձուի... մարդկային ցաւերն ու թշւառութիւնները՝ բարոյական թէ ֆիզիքական, նիւթական թէ ոգեկան՝ կը չքանան, կը մեռնեն ինքն ինքն... Անշուշտ, պէտք է հարթել ճանապարհը. կան արհեստական խոչընդոտներ, որ պէտք է հեռացնել, որպէսզի դալիք «ընկերային յեղափոխութիւնը» լինի դէւերին, նապագոյն զոհերով — բնական զարգացման ընթացքով...: Այդ մտայնութիւնը մենք այն ժամանակները ընդունած էինք համարեա բոլորս, եւ ոչ միայն հայ ուսանողութիւնը, այլ եւ ռուս, լեհ, բուլղար եւ այլ արդուութեանց պատկանած երիտասարդութիւնը. ի դէպ՝ ստացւում էին տեղեկութիւններ, ըստ որոնց ռուս մայրաքաղաքների ուսանողութիւնը մեծ թւով մտնում էր նոր կազմակերպւած Ռուս. Ս. - Դ. կուսակցութեան շարքերը: Կրկնում եմ՝ այդպիսի իւրաքանչեւ հոգեկան մթնոլորտ էր կազմւած Եւրոպայի շատ համալսարանների ուսանողական շրջաններում. եւս առաւել այդ օդը խտացած էր ժընեւում, որտեղ,

1887 թվից արդէն դոյութիւնս ունէր «Հնչակ»-ը եւ որտեղ հաստատւած էր «գլխական սոցիալիզմ»-ի ուսու կենտրոնը յանձին Պլեխանովի, Զատուլիչի, Աքսելուդի եւ ուրիշ յեղափոխական տաղանդաւոր գործիչների:

Ու ստեղծւեց իմ եւ միւս հայ ընկերներին մէջ այն հաւատքը, որ մեծ չափով յիշեցնում էր հաւատաւոր մահմետականի աղօթքի նախարանը՝ «Միակ Աստուծը Ալլահն է եւ Մուհամէդը նրա միակ մարդարէն»։ Կայ միայն մի խոկոտան սոցիալիզմ եւ այդ՝ մարքսիզմն է... » :

Մարքսիզմի մասին եւս դեռ առիթ կունենամ անդրադառնալու, քանի որ նա ոչ միայն հայ երիտասարդութեան մտորումների տեսակէտից որոշ դեր կը խաղայ, այլ եւ իրրեւ տնտեսական ուսմունք, որովհետ պատմահասարակական մեքոն է, մանաւանդ, իբրեւ փիլիսոփայական ըմբռնում, ինչպէս արդէն ասել եմ, դարձաւ եւ՛ լիորձաբար, եւ՛ քար քայթակողութեան հայ յեղափոխական եւ հայ յեղափոխականների միասնական ու համերաշխ գործունէութեան խանդարման տեսակէտից:

Նոյն ժամանակները համալսարանի սրահներից մէկում եւս պատահամբ ծանօթանում եմ մի հայ ուսանողի եւ մի ուսանողուհու, որոնք միասին էին գալիս ու միասին գնում էին դասախօսութիւնից յետոյ: Ուսանողը Քր. Օհանեանն էր, մօտ 23 - 24 տարեկան չէլ ու համակրելի դէմքով, իսկ ուսանողուհին՝ Օր. Մ. Թադէոսեան (որը մի քանի տարի յետոյ ամուսնացաւ Թիֆլիսից եկած Աբովեանց ուսանողի հետ): Իմ զարմանքին, որ նոր ծանօթներս երբեք ներկայ չեն լինում հայ եւ օտար ուսանողական հաւաքոյթներին եւ ղեկոյցներին՝ պատասխան են ստանում, թէ՛ «դարտակ բաների վրա ժամանակ չենք ուզում կորցնել»: Յ. Դաւթեանը, ինչպէս եւ Ա. Նազարբէկը յետոյ ինձ բացատրեցին դրա գլխաւոր պատճառը. Քր. Օհանեանը «Հնչակ»-ի հիմնադիրներից մէկն է եղել եւ աշխատակցել է «Հնչակ»-ի առաջին համարների դրաշարական - տպարանական աշխատանքներին, բայց յետոյ, ինչ ինչ անձնական պատճառներով եւ Օր. Թադէոսեանի ազդեցութեան տակ (որա ու Մարօի մէջ ինչ որ տարակարծութիւններ կային), խզել էր իր յարաբերութիւնները Նազարբէկի ու «Հնչակ»-ի միւս հիմնադիրների հետ (Ռ. Սանադաւի ու Կաֆեանի): Շուտով սրանք իմանում են, որ Մ. Փորթուղալեանի հրատարակած «Արմենիա» երկչարաթաթերթում «Հնչակ»-ի դէմ դրող ու «Միւնի» կեղծանունով ստորագրող յօդածների հեղինակը Քր. Օհանեանն է:

Երբ եւս եկայ ժընեւ, «Հնչակ»-ը ոչ միայն չէր դադարեցրած իր

բանակուիւր «Արմենիա»-ի հետ, այլ Պալարի Յուլիս 15-ի ցոյցից յետոյ՝ է՛լ աւելի սրել էր ու մէկ ճակատի փոխարէն, երկու նոր ճակատներ էր դառել եւ նրանց դէմ յարձակուում էր. մէկը Մինաս Չերապի «Լ'Ամէնի» երկամսեայ թերթն էր, միւսը՝ Սվազլըի «Հայաստան» փոքրիկ թերթը:

Այդ բանակուիւր, անշուշտ, սկզբունքային էր եւ իր փոքրիկ պատմութիւնն ունէր. հայ ուսանողութիւնը ինձ պատմեց, չուտով ես ինքս էլ ծանօթացայ թէ՛ «Արմենիա»-ի եւ թէ՛ «Հնչակ»-ի հին եւ նոր համարներից:

Պէտք է ասել, որ ուսածայ մտաւորական յեղափոխականները ո՛չ այն ժամանակները, ո՛չ էլ հետագայում երբեք չեն ընդունած, որ Մկր. Փորթուգալեանը գործօն յեղափոխական է եղել: Գալով Մ. Չերապին ու Սրվազլըին՝ որոնք, իրենց իւրայայտուկ մտայնութեամբ, հէնց սկզբից եղել են հակայեղափոխական մտածելակերպի ներկայացուցիչներ: Բայց Մ. Փորթուգալեանը որոշ մշակութային ու հայրենասիրական անցեալ էր ունեցած Վաստուրականում, ծանօթ էր թրքահայ գլխաւոր գաւառների կեանքին, ունէր իր դրական կողմերը, ունէր իր համակիրներն ու կողմնակիցները. իսկ իննսունական թւականներին (1896) արմենականները մինչեւ իսկ որդեգրած էին հնչակեանների եւ դաշնակցականների յեղափոխական գործելակերպը (Վանի ինքնապաշտպանութեան մեծ դէպքը): Բանաւոր պատմութիւնից եւ «Հնչակ»-ի հին համարներից ես խմացայ հետեւեալը.

Երբ 1885 թւականին Նաղարբէկեան ամուսինները, Ռ. Խանազատը, Կաֆեանը (Շմաւոն) եւ ուրիշները դեռ չէին ծրագրած յատուկ յեղափոխական կուսակցութեան ձեւոնարկումը, փորձել էին Մարտէյլի մէջ հրատարակող «Արմենիա»-ի միջոցով «հրապարակ իջնել Հայաստանի ազատագրութեան դուռ յեղափոխական ծրագրով, նրանք առաջարկութիւններ էին աբել «Արմենիա»-ի խմբագրին՝ ապստամբական - յեղափոխական ծրագրի մշակումը» եւ, ի հարկէ, խնդրել էին, որ Մ. Փորթուգալեանը նախօրօք իր կողմից «Արմենիա»-ի քաղաքական հայեացքները ուղղէ դէպի այդ կողմը, այլ եւ թողնէ «ակնկալութիւններ» մտայնութիւնը թիւրք կառավարութեան կամ եւրոպական զիւանազանների վերաբերմամբ: Բայց կրկին ու կրկին առաջարկութիւններից ու Փորթուգալեանի լուսթիւնից յետոյ՝ խմբակը Նաղարբէկի առաջարկութեամբ վճռում է հիմնել իր սեփական թերթը, որպէս արտայայտիչ դուռ յեղափոխական - ապստամբական գործելակերպի: Ա. Նաղարբէկը ինձ պատմում էր, որ երբ Մ. Փորթուգալեանը 1886 թ. ստեղծեց «Հայոց Հայրենասիրական

Ընկերութիւնը», յայտարարեց թէ «լուկ - մշիկ պիտի դիմէ Բերլինի Համաժողովին խոստացած ինքնավարութեան թրքահայ դաւառների համար»: «Այդ դեռ ոչինչ, աւելացնում էր Նաարբէկը, Փորթուղալեանը դեռ յոյսը չէր կորցրած Թիւրքիային դիմելու մեթոդից, ասելով, թէ՝ «այդ կերպով մենք մեր հպատակութեանը պարտքը կատարած կրլլանք օսմանեան պետութեան հանդէպ»:

Անշուշտ, ուստահայ մտաւորականութեան համար, (մանաւանդ արդէն եւրոպական ընկերային դադափարներին համակիր ու կամ ընդունած), Փորթուղալեանը իր մտաւոր խիստ հալիւտ զարգացումով, անգիտակ եւրոպական քաղաքական - ընկերային նոր հովերին, իսկ դիւաւորը, իր ոչ - յեղափոխականի խառնածքով՝ չէր կարող ղեկավար ուժ ներկայացնել: Հայ հանրային միջնորդը թէ՛ Թրքահայաստանում եւ թէ Կովկասում, Բերլինի հիասթափեցուցիչ համաժողովից յետոյ կարող էր միայն ծնունդ տալ յեղափոխական դործելակերպի. պարապ խօսքը, լացն ու կոծը, աղերսը կամ անէծքը արդէն ճանաչւած էին իբրեւ իրական ուժից զուրկ աղապներ: Արդարեւ՝ ով ապրել է այդ շրջանին, կամ նրա անմիջապէս մօտ տարիներին՝ յիշում է, որ ութսունական թւականների կէսերին հայ հանրային միջնորդը շատ աւելի ծարաւ էր քաղաքական գործի թարմ շունչի, քան թէ անապատի կիզիչ արեւից տաքացած աւաղը՝ ցօղին ու անձրեւին...:

**

Ժրնէլի իմ կեանքի առաջին շարաթներից իսկ Նաարբէկը տեսնելով իմ անվերապահ համակրանքը դէպի Հնչակեան կազմակերպութիւնը եւ իմ ցանկութեան դիջելով՝ թոյլ տուց, որ ծանօթանամ թէ՛ «Հնչակ»-ի անցեալ տարիների լոյս տեսած համարներին եւ թէ առհասարակ, հատուկաւոր եղած կամ մնացած արձանագրութիւններից, հիմնաւորման շրջանին: Պէտք է ասեմ, որ մինչեւ 1890 թ. Հնչակեան կազմակերպութեան պատմութիւնը մեծ չէր: Եօթ - ութ ուստահայ եւ պարսկահայ մտաւորականներ յայլեւ կորցնելով իրենց յոյսը, որ «Արմենիա»-ի միջոցով կը կարողանան ասպարէզ լինել եւ հայ հասարակութեան նոր գործելակերպ առաջարկել հայ կական հարցի վերաբերմամբ, վերջնականապէս վճռում են հիմնել առանձին, զուտ յեղափոխական կուսակցութիւն թրքահայ հարցին ներքեւ՝ որդեգրելով ուստ նարդովցիների եւ Փրանսիական բրանկիստների գործելակերպը, այն է՝ ասպտամբական - ահարկչական պատրաստութիւններ թիւրք կառավարութեան դէմ. այդ մասնակի

ահաբեկչական միջոցները հրահրելով եւ ուժ տալով Թրքահայ ժողովրդի պահանջներին, խմբակի կարծիքով, մէկ կողմից հող պիտի պատրաստէին Թրքահայ գաւառների ընդհանուր ապստամբութեան, իսկ միւս կողմից՝ պիտի ստիպէին եւրոպական մեծ պետութիւններին միջամտել եւ պահանջել թիւրք կառավարութիւնից մի շարք վարչական, քաղաքական եւ տնտեսական բարենորոգումներ հայկական գաւառներում: Այդ բարենորոգումներին, սակայն, ապագայ յեղափոխական կազմակերպութիւնը, յենած ժողովրդի գիտակից շերտերի վրա, պէտք է տար այնպիսի ընթացք, որ Թրքահայ դիւղացին՝ ազատած կառավարական բռնութիւններից՝ չենթարկէր ապագայում նոր եւ ամէն տեսակի տնտեսական կեղեքումների ու շահագործութիւնների ո՛ր կողմից էլ որ երեւէին այդ շահագործութիւնները:

1886 թ. ժընեւում հիմնած նոր յեղափոխական կուսակցութիւնը արդէն 1887 թ. ձեւաւորում է «Հնչակեան Յեղափոխական Կուսակցութիւն» անւան տակ եւ հրատարակում է «Հնչակ»-ի ամսօրին համարը: Նոր քաղաքական կուսակցութիւնը եւ նրա հիմնադիրները այդ շրջանին, ինչպէս ասի, սրդեգրած էին նարոդովոյցի ընկերավարականների քաղաքական - ընկերային բմբռնումները, մտածելակերպը եւ, ի հարկէ, գործելակերպը: Երկրից ստացուող նամակներից եւ տեղեկութիւններից, եկողների պատմածներից այն տպաւորութիւնն էր ստացւում, որ «Հնչակ»-ի ռազմաշունչ յօդւածները մեծ ընդունելութիւն էին գտնում հայ ժողովրդի բոլոր դանդաւանների կողմից: Շատ բան, եթէ ոչ ամէն բան, հայ դիտակից խաւերի համար նոր էր, թարմ եւ կենդանի «Հնչակ»-ի գրածների ու պահանջների մէջ: Բայց մասնաւորապէս հետեւեալը. նախ՝ ստեղծւած էր մի յատուկ քաղաքական կուսակցութիւն՝ Թրքահայաստանի ապստամբութիւնը ապստամբական միջոցներով ձեռք բերելու նպատակով, երկրորդ՝ նա կուեւրւ էր միապետական կարգերի դէմ (ազգային հարցի չըջանալով), ուրեմն, անկախ թուրք, սուս, պարսիկ միապետական կառավարութիւնների օգնութիւններից կամ հակադրանքից: Երրորդ՝ նա չէր սահմանափակւում իր պահանջները Բերլինի համաժողովում ընդունւած, բայց չիրագործւած, 61-րդ յօդւածի բարենորոգումներով, այլ պահանջում էր Թրքահայաստանի ու Պարսկահայաստանի անկախութիւնը, իրրեւ միացեալ հայրենիքի պետութիւն: Եւ, վերջապէս, չորրորդը՝ որ կատարեալ եւ նորութիւն էր, եւ հէնց սկզբից մտահոգեցուցիչ պարագայ, այդ՝ Հնչակեան Յեղափոխական Կուսակցութեան ընկերավարական գաղափար-

ներն էին, որոնց իրադրությունը նա թէեւ իր գործունէութեան «հեռաւոր ծրագրի» մէջ էր ամփոփում, եւ ըստ երեւոյթին գործունէութեան «զազափարական սլահետ» էր, բայց գնալով քայլ առ քայլ խճողում էր ու բարդացնում Հնչակի ծրագրած անմիջական զուտ ազգային ապստամբական գործունէութիւնը:

Հնչակի ի յայտ բերած գործունէութեան ընթացքում, երկու-թիւնն ու հակասութիւնները թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին գործեւակերպի տեսակէտից, այն ժամանակները իմ աչքին չէին ընկնում. պատրանքները եկան հետագայում. բայց 1890 եւ մօտակայ 2 - 3 տարիները մթնոլորտը այլ էր: Իմ ժամանակակիցների վրայ մասնաւորապէս խոր տպաւորութիւն էր թողել «Հնչակ»-ի վերաբերմունքը 61-րդ յօդածի վերաբերմամբ: Ի՞նչ էր ասում նա:

«Հնչակ»-ը գրում էր 1889 թ. սկզբից. «Հնչակ»-ը եւ նրա հետ հայ ժողովուրդը պահանջելու չէ եւ, մանաւանդ, աղերսելու չէ Եւրոպայից 61-րդ յօդածի գործադրութիւնը. այդ յօդածը բացի մութ եւ երկդիմի բառախաղութիւնից ոչինչ չէ ներկայացնում, քանի որ Եւրոպան չի երաշխաւորում բարենորոգումների իրական գործադրութիւնը, ուստի ոչ մի միտք չունի դիմել Եւրոպային պահանջելով (եւս առաւել աղերսել՝ Փորթուգալեանի, Չերազի կամ Սըվազլըի ա լա տունը մնացած պառաւ աղջիկների մտայնութեամբ) այդ յօդածի գործադրութիւնը. ընդհակառակը, հայերը մէկ անգամ ընդ միշտ պէտք է թողնեն այդ սխալ եւ հայ ժողովուրդի շահերին հակառակ ընթացքը եւ իրենց բոլոր ուժը եւ ճիգը գնեն սեփական հայկական ուժի վրա, գործադրելով դրան յեղափոխական - ապստամբական շարժումներով, որոնց նպատակը շատ աւելի ընդարձակ ու մեծ է 61-րդ յօդածի իմաստից. մի՞թէ դեռ կան Հայեր (բացի կոյր եւ խուլ ծնած մի քանի «ազգային» գործիչներից), որ չը հասկանային, թէ Բերլինի համաժողովի ձեւականօրէն սուղարկած բարենորոգումները աչքակապութիւն եւ կեղծիք են: Ազգային անկախութիւնը կարող է հետեւանք լինել միայն ազգային սեփական ու իրական ուժի ցուցադրութեան... »:

Նոր էր, ասում եմ, մեղ համար եւ հմայիչ եւ այն ձեւակերպումը, որ «Հնչակ»-ը անում էր 1887 թ. հրատարակած ծրագրում, ըստ որի, «Հնչակ»-ի նպատակն է յեղափոխել եւ ոչնչացնել միապետական կարգերը, փրկել հայ ժողովուրդն իր ստրկական դրութիւնից, տալ նրան քաղաքական կատարելութիւն միջամտելու քաղաքական գործերում, վերացնել այն խոչընդոտները, որոնք արգելք են լինում նրա տնտեսական զարգացման, առհասարակ նրա կուլտուրական

յառաջգլխութեան...» ու «տաղաւելով Թրքահայաստանի միապետական կարգերը՝ փոխարինել նրանց հանրային ոսմկալարական, սահմանադրական կարգերով»: Ու, վերջապէս, «Հնչակ»-ը պահանջում է հայ գիտակից հասարակութիւնից. Ա.) Հայ յեղափոխական գործունէութիւն այսօր բացառապէս նւիրւած Թրքահայ ժողովրդի դատին պաշտպանութեան եւ լուծման համաձայն մօտակայ նպատակի. Բ.) Տալով հայ ժողովրդին անտեսական կեանքի (հողային եւ արդիւնաբերական) զարգացման ազատ միջոցներ, որոնք կարող են իրագործւել միայն ոսմկալարական հասարակապետական համակարգով. այդ նպատակներին հասնելու համար հայ յեղափոխականը պէտք է սրբազործէ քաղաքական ապստամբութիւնը եւ դրան պէտք է դիմէ այժմ եւ անմիջապէս»:

Մինչեւ այդ կէտը հայ գիտակից տարրերը, թէ ոչ ամբողջութեամբ, դէթ մեծամասնութեան մէջ՝ անվերապահօրէն ընդունած էին այդ մտքերը. բայց «Հնչակ»-ը հրատարակելով իրեն ընկերվարական դադափարները որդեգրած կուսակցութիւն, նշում էր ընկերվարական համակարգը իրրեւ թէ եւ հեռաւոր, բայց միակ իր դէպ, որին դիմելով հայ ժողովուրդը կը գտնէ իր ազգային եւ մարդկային իրական երջանկութիւնը»: Այդ «հեռաւոր» եւ «մօտակայ» ծրագիրները դադափարը — մինչեւ իսկ 1890 թ. Ժընեւի հայ ուսանողութեան մէջ, որը «Հնչակեան» էր — ծնում էր մերթ ընդ մերթ աղօտ կասկածներ ազգային ապստամբութեան տեսակէտից եւ ուրեմն, հարց էր առաջ գալիս, թէ որքա՞ն օրինապատշաճ է «այսօր» իսկ խօսիլ ընկերվարութեան մասին, թէկուզ «հեռաւոր իր դէպի»:

Այդ հանգամանքը մեզնից մի քանիսին ստիպեց խնդրել Ա. Նազարբէկին, իրրեւ Հնչակեան կուսակցութեան պարագլուխին եւ «Հնչակ»-ի խմբագրին՝ աւելի լուսարանել այն հարցը, թէ ինչո՞ւ «Հնչակ»-ը անհրաժեշտ է կարծում ընդգծել, որ նա ընկերվարական հիմունքների վրա է ամրացնում իր աշխարհահայեացքը եւ հէնց այժմ է խօսում այդ մասին ու մինչեւ իսկ ծրագրում է հրատարակել «միջազգային սոցիալիզմի» վերաբերեալ ժողովրդական կամ գիտական գրքոյկներ, — թէ եւ «սոցիալիզմը հեռաւոր նպատակ է» յայտարարւած...

Նազարբէկը համաձայնեց մեզ գոհացում տալ եւ բացատրել թէ ի՞նչպէս է ինքը հասկանում «սոցիալիզմը» եւ նրա անհրաժեշտութիւնը հայի համար»:

Առաջուց նշանակւած էր յատուկ օր: Բեռնից, Յիւրիից, Մոն-

սկզբից եւ մինչեւ իսկ փարիզից (Սաքս Աղամիրզեան) եկել էին տասնի չափ ուսանողներ։ Այսօր, 48 տարիներէ յետոյ, ի հարկէ, դժւար է ինձ մէջ բերել Նաղարբէկի մեծ զեկոյցը, բայց յիշողութեանս մէջ ամուր դըռմուսած մնացած են զլիսաւոր կէտերն ու հիմունքները, որոնք ամփոփուած էին այսպէս (սլահելով, որքան կարող եմ, Նաղարբէկի ռնն ու լեզուն, աւելի ցայտուն անելու համար նրա աշխարհահայեացքը) :

« Մենք ներկայ ենք մարդկային պատմութեան այն շրջանին, երբ սոցիալական կամ բանւորական հարցը ամբողջ քաղաքակիրթ աշխարհում հետզհետէ դառնում է այլեւս կենտրոնակէտ, որի շուրջը կատարում է քաղաքակրթւած տէրութիւնների քաղաքականութիւնը եւ կուսակցութիւնների ընթացքը։ Հին քաղաքական կուսակցութիւնները՝ պահպանողական եւ ազատամտական օրից օր կորցնում են իրենց ուժը, տեղի տալով նոր քաղաքական կուսակցութեան՝ «սոցիալիստական», որը ծնւել է աշխատաւոր ժողովրդի որովայնից եւ բնականոն ընթացքով։ Ու քանի աշխատաւոր (խօսքին լայն մտքով առած) դասակարգի քանակը մեծանում է եւ գիտակցութիւնը դարգանում, այնքան մեծ եւ անկանդուն է լինելու սոցիալիստական կուսակցութիւնների ուժը եւ գործունէութիւնը։ Մենք՝ հայերս հրապարակ իջնելով, որպէս ուրոյն քաղաքական կուսակցութիւն, չենք կարող անտարբեր մնալ դէպի սոցիալական խնդիրը, մի խընդիր, որին պատկանում է ապագան, գուցէ եւ մօտակայ դարը։ Ու մեր, ինչպէս եւ ամէն մի քաղաքական մարմնի դիրքը, պէտք է լինի որոշ սոցիալիզմի վերաբերմամբ՝ թեր կամ դէմ, մասնաւոր որ սոցիալիզմը հանրամարդկային մի այնպիսի մեծ խնդիր է, որի նըմանները պատմութեան մէջ երեւան են գալիս միայն մի քանի անգամ, եւ ամէն անգամ յեղաշրջելով ազգերի հանրակացութեան բոլոր կերպերն ընդհանուր առմամբ։ Սոցիալիստական հարցը իր մէջ ամփոփում է քաղաքակիրթ ազգերի ներկայ վերին աստիճանի բարդ հանրակացութեան բոլոր այլ երեւոյթների որոշիչ իմաստը, լուծման ձեւն ու եղանակը։ Սոցիալիստական հարցը ամէն բան է հասարակութեան տեսակէտից․ տնտեսական եւ քաղաքական կեանք, նիստ ու կաց, աշխատանքի ու կապիտալի փոխադարձ յարաբերութիւն, զրականութիւն եւ մամուլ, զեղարւեստ, կանանց հարց, ամուսնական խնդիր, պատերազմ, զիտութիւն, դպրոց․ մի խօսքով, ամէն հասարակական յարաբերութիւնների հետագայ զարգացման ու առաջդիմութեան ձգտումներն ու պահանջներն իր մէջ է ամփոփում սոցիալական խնդիրը։ Եւ ահա այդ խնդիրը այսօր եկել կանգնել է մարդկութեան առջեւ սպառնական, ամէն բան կլանող, ահաւոր կեր-

սլարանքով, սլահանջելով շուտափոյթ լուծում: Քաղաքակիրթ աղ-
գերի հետագայ առաջդիմութեան կարելիութեան միակ սլայմանն է
այլ եւս հանդիսանում սոցիալական խնդրի լուծումը. բայց դա
բանւորական խնդիր է. աշխինքն՝ բանւոր, աշխատաւոր ընդհանրու-
թեան դասակարգային սլատմական ձգտումներն ու սլահանջներն են,
որ առաջացրել են սոցիալիստական խնդիրը: Ծագած լինելով ար-
դիւնաբերութեան ներկայ ձեւերի սլայմաններէց, սոցիալական խն-
դիրն իր հիմքով տնտեսական խնդիր է եւ, հետեւաբար, սլրոկտա-
բիատի ներկայումս ունեցած տնտեսական անմիջական սլահանջնե-
րի ու ձգտումների արդիւնք: Ահա սլրոկտաբիատի այդ սլատմա-
կան ձգտումների եւ սլահանջների տեսական արտայայտութիւնն ու
ամփոփումն է, որ կոչւում է դիտական սոցիալիզմ կամ մարքսիզմ:
Իրրեւ ալդպիսին՝ դիտական սոցիալիզմը յայտնւում է միակ միջո-
ցը, որ կարող է լուծում տալ բանւորական – սոցիալական խնդրին,
որն աշօր դարձել է հանրամարդկային յառաջդիմութեան խնդիր:
Եւ որովհետեւ այդ լուծումը կարող է տեղի ունենալ միայն ներկայ
հասարակական կարմակերօլութեան հիմնական յեղաշրջումով, դի-
տական սոցիալիզմն իր էութեամբ հանդիսանում է յեղափոխական
հօր դաղափար:

« Ու մեր նադատկն է հայութեան մէջ ընդարձակ ծաւալով ուժ
տալ դիտական սոցիալիզմի սլրոսլադանդին ու սոցիալիստական աշ-
խատութեան. առաջինը սկսելով հայերիս մէջ. ահա երեք տարի շա-
րունակ մենք անում ենք «Հնչակ»-ի միջոցով: Այս օրերս մենք կը
ձեռնարկենք սոցիալիստական բրոշլուրների հրատարակման եւ ալդ-
սլիսով մեր զուտ ալդային յեղափոխական գործունէութեան կաշ-
խատենք տալ հայ յեղափոխականին եւ աշխատաւոր ընդհանրու-
թեան այն դիտական դաղափարը, որ ճշմարտութեան խօսքն է եւ
աշխատաւոր դասակարգի շահերի սլաշտօլան ու նրա համար գոր-
ծող զէնքն է յօղուտ առհասարակ մարդկութեան: Այդ գիտական գա-
ղափարը նրա ձեռքին միշտ կը հանդիսանայ ամենագօրաւոր զէնքն
իր սլատմական կուում ընդդէմ ամէն տեսակ բոնուրիւնների, հա-
րատահարութիւնների, շահագործութիւնների եւ միշտ կը լինի բա-
ցաւորող ու լուսատու դաղափարը բոլոր հարցերի ու երեւոյթների
վերաբերմամբ: Մենք հաւատացած ենք, որ մեր ցանած սոցիալիս-
տական սերմերը չեն ընկնելու մերկ եւ ապառամ քարերի վրա, այլ
մտածման նիւթ, դաղափար ու հասարակական ուղղութիւն կը տան
հայ յեղափոխականին, աշխատաւորին, որսլէս եւ սլատ մտքի, բա-
րի կամքի տէր ու անկողմնակալ հայերին... » :

Ու յետոյ, զիմելով սրահի այն կողմը, որտեղ նստած էինք Յ.

Դաւթեանը, Ա. Աթարէկեանը, Երեանդ Լալայեանը, եւ եւ, կարծեմ, Վրթանէս Փափաղեանը՝ Նաղարբէկը աւելացնում է. «Եթէ այս բացատրութիւնները բաւարար չեն ձեզ համար եւ դուք կը կամենայիք հարցնել, թէ՛ «չի՞ կարելի արդեօք, որ նախ Հայաստանի անկախութիւնը ձեռք բերելու ապա՝ հետագայում՝ դրադէնք սոցիալիստական հարցով», եւ կը սրտատախանեմ. «Ձէ՛», ու նախ եւ առաջ՝ որովհետեւ հայ յեղափոխականին համար աւելի պարզ կը լինի նրա քաղաքական եւ ընդհանուր իդէալները՝ նպատակը եւ իմաստը. ապա՝ եւ այն դեռահեղութեան անհրաժեշտութիւնը նրա համար, որ հայ ժողովրդին բաւարար չէ քաղաքական ազատութիւնը, եթէ երաշխաւորած չէ նրա անտեսական կեանքի զարգացումն ու ապահովութիւնը. դուք էլ ինձ պէս ամէն օր կարդում էք, թէ ո՛ր աստիճան խտրացի ժողովուրդը, որ քառուրդ դար է ինչ ձեռք է բերել քաղաքական ազատութիւն ու աշխօր աղքատ է ու թշուա, եւ դադթում է իր հայրենիքից ու անիշխանութեան գիրկին է ընկնում (լուում է Ա. Աթարէկեանի բացականչութիւնը՝ «Կեցցէ՛ անիշխանութիւնը».— Ռ. Բ.) *). . . . Նոյնը եւ բուլղար ու սերբ գիւղացիների եւ աշխատաւորների շահագործւած անտեսական դրութիւնը... Ա՛յ, հարցրէք մեզ ամենքիս ծանօթ բուլղարացի ուսանող Ռակովլաքիին. նա ձեզ կը պատմէ, թէ ինչպէս Բուլղարիայի յետ ընկած գիւղում բուլղար գիւղացին ծախում է հարեւան գիւղի թիւրքին իր սեփական աղջիկը, կամ փոխարինում է նրան մի ջուխտ եղնների հետ, առանց որոնց անկարող է մշակել սեփական հողը: Եթէ մենք նախօրօք չկրթենք սոցիալիստական գաղափարներով ու չպատրաստենք հայ յեղափոխականի աշխարհահայեացքը, նա կը բաւականանայ վարչական — քաղաքական ոչֆորմներով հայ ժողովրդի վերաբերմամբ եւ կը մոռանայ էականը հայ ժողովրդի համար՝ անտեսական կեանքի բարւոքումը: Մենք, յուսով եմ եւ դուք ամենքդ (եւ դո՛ւ Աթարէկեան, որ առաջին, դուցէ եւ վերջին, անարխիստն եւ հայերի մէջ), չէիք կամենայ, որ այն Կիւլիդարը, որ իր գեղեցիկութեան համար, բոնութեան ենթարկւեց Մուսա Բէկի կողմից, վաղը, իր աղքատ

*) Ադ. Աթարէկեանը պատկանում էր Միջագոյնին Անիշխանական Բնկերութեան. ամէն անգամ եւ ամէն տեղ նա հակաճառում էր ընկերավարականներին, հեղուում էր ընկերավարական վարդապետութեան նախատեսած ապագայ հասարակարգը՝ հիմնւած «սոցիալիստիկ շիկտատութեան» վրա: Ադեֆ. Աթարէկեանը հրատարակում էր մի փոքրիկ ամսաթերթ՝ «Համայնք». շատ համակրելի, խիստ գաղափարական եւ միամիտ երիտասարդ էր. երբեք հայ ուսանողութեան շարքերում չը գտաւ կողմնակիցներ, բայց մինչեւ վերջ էլ չէր վիատում... Ռ. Բ.

և ևս սոված ծնողների ձեռքով ծախելի նոյն քիւրդին մի ջուխտ եղներ ձեռք բերելու համար... » :

Եթէ ևս Նաղարբէկի երկար, ինքնավստահ, կարուկ ևս առարկութիւններ չհանդուրժող զեկոյցի ամփոփումը մէջ բերի, նպատակաւ այն է, որ ցոյց տամ «Հնչակ»-ի, այսպէս ասած, յեղափոխականութեան փիլիսոփայութիւնը: Մեր՝ երիտասարդներին համար մի քիչ միամիտ և մեծ չափով անփորձ մտայնութեան համար այդ զուտ զաղափարախօսական զեկոյցի, զուտ տեսական ելակէտներէից ցրած մտքերի խորձը թւում էր ևս տրամաբանական և, ի հարկէ, ճշմարտութեան վերջին խօսքը: Եւ ի՞նչ կար 1890 - 1891 թւականներին հայ երիտասարդութեան համար աւելի բարձր, աւելի հմայիչ, քան այն միտքը, այն հմայիչ հողեկան զրութիւնը, որ ազգային տենչերի իրագործումը մի հանդրան է սոսկ, բայց անհրաժեշտ հանդրան, համամարդկային իդէալներին հասնելու համար: Ոչինչ այնքան դիւրին չէ, որքան տեսականօրէն զրած քաղաքական մտքերից անել տրամաբանական կըրակացութիւններ, մանաւանդ, երբ այդ մտքերը ձեւաւորւած են գեղեցիկ ձաւերի մէջ ու լրագրական սղատաշունչ յօդւածներով, և ոչ թէ ամենօրեայ կեանքի բազմազան երանգների ու իրական երեւոյթների վրա են յենւած:

Երբ մի քանի տարի յետոյ յեղափոխական նպատակներով ինձ պէտք եղաւ շփուել Փարիզի, Լոնդոնի և Բերլինի «միջազգայնական» միջավայրի հետ ու անձամբ ապրել Աթէնքում (որտեղ տեղափոխւած էր «Հնչակ»-ի կեդրոնը), այլ ևս այցելել Պոլիս, ինձ համար արդէն պարզ էր, որ ամենազեղեցիկ ու վսեմ ծրագիրների տրամաբանական կըրակացութիւնները՝ զարնւելով փոթորկայոյց յեղափոխութեան կոչոյ իրականութեան՝ կորցնում են իրենց հաւասարակշռութիւնը, ապա և ծնունդ են տալիս փոխադարձ հակասութիւնների: Զէ՞ որ յեղափոխութեան հիմնական պայմանը նախ և առաջ զրւած արտաքին խնդրի ու ներքին կարեւորութիւնների համապատասխանութեան մէջ է:

Բայց նախ անցնենք 1890 - 91 թ. յեղափոխութեան հետ կապւած դէպքերին ու դժգոհութիւններին:

(Շարունակելի)

